

Թ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ, Դասական գրաբարի շարահյուսական ոճաբանություն, Ե., «Հայաստան» հրատ., 2007 թ., 312 էջ:

Պրոֆ. Ս. Հայրապետյանի առաջաբանով լույս է տեսել Թ. Շահվերդյանի «Դասական գրաբարի շարահյուսական ոճաբանություն» գիրքը: Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Թերեզա Շահվերդյանը հայտնի է «Գրաբարի դերբայները» ուսումնասիրությամբ և գրաբարի քերականության որոշ հարցերի քննությանը վերաբերող բազմաթիվ գիտական հոդվածներով, իսկ այսօր մեզ է ներկայացնում գրաբարի դասական շրջանի մի հիմնահարցի՝ շարահյուսական ոճաբանության ուսումնասիրությունը, որը նյութի քննության իմաստով ամբողջովին նորություն է՝ դասական գրաբարի շարահյուսական ոճաբանության նորովի հետազոտություն:

Գիրքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, ունի ամփոփում և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկեր, ծանոթագրությունները տրված են առանձին բաժինների քննության ավարտից անմիջապես հետո:

Առաջին գլուխը նվիրված է դասական գրաբարի շարահյուսական վերա-իմաստավորումներին, որտեղ առանձին ուշադրության են արժանանում՝ 1) շարահյուսական վերաիմաստավորման ընդհանուր ըմբռնումը, 2) անդեմ և դիմավոր, թերի և լրիվ, միակազմ և երկկազմ, հաստատական և ժխտական ու հնչերանգով տարբերվող նախադասությունների վերաիմաստավորումները:

Շարահյուսական վերաիմաստավորումները խարսխվում են քերականական հոմանշության, այն է՝ լեզվական տարբեր ձևային կառույցների միջոցով նույն կամ իմաստով մոտ բովանդակությունն արտահայտող իրողության վրա: Վերաիմաստավորումը լեզվաոճական ուրույն երևույթ է, որ նշանակում է «...լեզվական որևէ միավորի կիրառությունը հարացուցային շարքում նրա հակադիր անդամի գործառույթով» (էջ 17): «Վերաիմաստավորում» հասկացությունը առաջին անգամ գործածել են ռուս և եվրոպացի լեզվաբանները (Մ. Կուզնեց, Յու. Սկրեբնև, Ի. Առնոլդ, Վ. Գակ, Ի. Գալպերին և այլք), հայ լեզվաբանության մեջ դեռևս լայն տարածում չի գտել, և այդ եզրույթը ընդհանրապես գործածված չէ: Հեղինակն այստեղ առաջին լուրջ փորձն է կատարում՝ ընդգծելով, որ դասական գրաբարում հաճախակի են հանդիպում շարահյուսական այս կամ այն միավորի վերաիմաստավորման դեպքերը, երբ արտահայտման պլանում այս կամ այն շարահյուսական կաղապարը գործածվում է նրան հակադրվող հարացուցային ձևերի քերականական իմաստն արտահայտելու նպատակով: Քերականական փոխաբերությունը կամ վերաիմաստավորումը՝ որպես լեզվաոճական երևույթ, իրացվում է բովանդակության պլանում: Օրինակ՝ «Արդ՝ ելեալ դահճապետն պարծելով՝ չարամահ առնել զնա, և ետ հանել զնոսա շղթայիք ի քաղաքէն» (Ագաթ.¹, 111). *ելեալ* անցյալ դերբայը վերաիմաստավորման շնորհիվ բովանդակության պլանում հանդես է գալիս դիմավոր բայի գործառույթով, այսինքն՝ գործածվում է փոխաբերաբար՝ ելավ. «Արդ՝ ել դահճապետն պարծելով՝ չարամահ առնել զնա ...»:

Շարահյուսական վերաիմաստավորումը, ըստ էության, շարահյուսական ոճաբանության և մեթոդաբանության առանցքային գործառույթունն է, որը միաժամանակ շարահյուսական կառույցների նորովի ուսումնասիրության բանալին է, որի գործադրմամբ գրքի հեղինակն ակնհայտ արդյունքներին է հաս-

¹ Ագաթանգնոյայ Պատմություն Հայոց, Տփղիս, 1909:

նում. նա նշում է, որ դասական գրաբարի քերականական բոլոր կարգերում առկա են լեզվառճական բազմապիսի կաղապարներ, որոնք վերախմաստավորման գործառնությունով հետաքրքրություն են ներկայացնում, և մի քանի մասնակի բնութագրումներից հետո ավելի մանրամասնորեն է անդրադառնում «շարահյուսական կարգեր կազմող հիմնական քերականական հարացույցներին ու նրանց փոխաբերական կիրառություններին» (էջ 29):

Դրանցից առաջինն անդեմ և դիմավոր նախադասությունների վերախմաստավորումն է: Այստեղ բազմաթիվ օրինակներով հիմնավորվում են անորոշ և անցյալ դերբայներով կազմված շարահյուսական կառույցների վերախմաստավորման գործառնությունները: Օրինակ՝ «... ազդեալ ասացաւ - չճաշակել նմա ի ծառոյ անտի» (Ագաթ., 145). տրական ենթական անորոշի հետ է, «Եւ ահա իշխանութիւն առեալ չարասէր սպասաւորացն, զի զչորս զինուորս ի բուն աւագացն մատուցեն ի փորձութիւն տանջանացն» (Եղ.², 20). սեռականով ենթական՝ անցյալ դերբայ-ստորոգյալի հետ: «Նան ընդ լինելն իսկ սատանայի յԱստուծոյ. զիտաց՝ եթէ անսաստել ումեք Աստուծոյ՝ չար է և ոչ բարի» (Եզն.³, 50). սեռականով ենթական նախդրավոր անորոշի հետ է, իսկ տրականով ենթական՝ անորոշի հետ:

Այսպիսի դերբայական կառույցների բնութագրումներից հեղինակը եզրակացնում է, որ արտահայտության պլանում երկկազմ անդեմ ներկայացող այդօրինակ շարահյուսական կառույցները բովանդակության պլանում վերախմաստավորված են և ընթերցողի կողմից ընկալվում են որպես դիմավոր նախադասություններ (էջ 54):

Թերի և լրիվ, միակազմ և երկկազմ նախադասությունների վերախմաստավորման ենթաբաժնում դիտարկվում են նախադասության անդամների զեղչումները և դրանց առնչվող ոճական դրսևորումները: Հաճախական զեղչում ունի ենթական, ապա ստորոգյալը, երկրորդականներից՝ մասնավորապես ձևի պարագան, ուղիղ, անջատման, ներգործող, վերաբերության խնդիրները, երկխոսություններում՝ ամբողջական նախադասությունները: Զեղչված ենթակայի և ստորոգյալի վերականգնումով բովանդակության պլանում ունենում ենք երկկազմ նախադասություն, մինչդեռ անվանական միակազմ նախադասությունների ոճական վերախմաստավորման դեպքում սկզբունքորեն իրավիճակն այլ է. և՛ արտահայտության, և՛ բովանդակության պլաններում ունենում ենք միակազմ նախադասություններ: Օրինակ՝ Վա՛յ այնոցիկ, ընդ ոյր ձեռն գայցէ գայթակղութիւն (Խոր.⁴, 354)՝ Վա՛յ լիցի այնոցիկ, ընդ ոյր ձեռն գայցէ գայթակղութիւն: Բովանդակության պլանում կարող են ավելանալ *ես, լինիմ, եղանիմ* բայերի միադիմի ձևերը՝ *է, էր, իցէ, լիցի, եղև*:

Անորոշ դերբայով կազմված միակազմ նախադասությունները բովանդակության պլանում ըմբռնվում են որպես երկկազմ նախադասություններ, ինչպես՝ Ճանաչել զիմաստութիւն և զխրատ (Առակ., Ա, 1)՝ Ծանեա՛յք (ծանի՛ր) զիմաստութիւն և զխրատ: Մի՛ տալ զծողովուրդսն ի ձեռս անաստուած հեթանոսաց (Բուզ.⁵, 163)՝ Մի՛ տուր (մի՛ տուք) զծողովուրդսն ի ձեռս անաստուած հեթանոսաց:

Հաստատական և ժխտական նախադասությունների վերախմաստավորման ենթաբաժնում հեղինակը ցույց է տալիս, որ ժխտական կամ հաստատական կաղապարներով նախադասությունները բովանդակության պլաններում հակառակ իմաստներ են ունենում:

² Եղիշէի վասն վարդանայ և հայոց պատմրագմին, Ե., 1957:

³ Եզնկայ կողբացոյ Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:

⁴ Մովսիսի խորենացոյ Պատմութիւն հայոց, Տփղիս, 1913:

⁵ Փաստոսի Բուզանդացոյ Պատմութիւն հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:

Այդպիսի գործառնություններում, բնականաբար, նախադասությունները կրում են նաև կառուցվածքային փոփոխություններ: Օրինակ՝ Յիսուս՝ ասէ ցնա. զի՞ ասես զիս բարի. չիք բարի բայց մի Աստուած (Ղուկ., ԺԸ, 19)՝ Յիսուս՝ ասէ ցնա. զի՞ ասես զիս բարի. միայն մի Աստուած է բարի: Ժիստական կառույցներում գործուն դեր ունեն մի շարք բառեր ու կառույցներ, հատկապես՝ *բայց* (*բայց*), *սոսնց* նախադրությունները, *մինչև* շաղկապական միավորը, նվագասույթը (*լիտոտ*), կրկնակի ժիստական կառույցը և այլն, որոնք հանդիպում են պարզ և բարդ նախադասություններում:

Հնչերանգով տարբերվող նախադասությունների վերախմաստավորման ենթաբաժնում հատկապես մանրամասն բնութագրվում են հռետորական հարցական նախադասությունները, որոնք ոճական բազմազան գործառնություններ են դրսևորում: Նրանցում հարցական անվանումը ձևական բնույթ ունի, որովհետև բովանդակության պլանում պատասխան չունի, հենց հարցման մեջ առկա են պատմողական-հաստատական, ժիստական կամ հաստատական փոխաբերական ըմբռնումները: Ապա դիտարկվում են հարցական նախադասությունների ամենատարածված կաղապարները, որոնց կազմավորման խնդրում վճռորոշ դեր ունեն եղանակիչ բառերը՝ *ընդէ՞ր*, *մի՞ թէ*, *զիս՞ ըրի*, *զի՞*, հարցական դերանունները՝ *ո՞*, *ո՞վ*, *զի՞*, *զի՞նչ* (նաև սրանց թեք ձևերը), հարցական բառերը՝ *ուստի՞*, *որչա՞յի*, *ու՞ր* և այլն: Հռետորական պատկերավորման շարքում տարբերակվում են նաև ճարտասանական դիմումները, փոխաբերական իմաստով հրամայական նախադասությունները:

Երկրորդ գլուխը վերաբերում է դասական գրաբարի շարահյուսական արտահայտչամիջոցների քննությանը: Հաջորդաբար ներկայացվում են կրկնությունները, զուգահեռականությունը և խաչաձևումը, աստիճանավորումը, համեմատությունները, ոճական հակադրությունները, մասնատված նախադասությունները, վերջում՝ շարադասության ոճական հիմնահարցերը:

Լեզվական միավորների ոճական կրկնությունները ամենից հաճախ հանդիպող արտահայտչամիջոցներից են: Շարահյուսական արտահայտչամիջոցների քննությանը վերաբերող այս բաժինը ամենածավալունն է (շուրջ 40 էջ) և բնութագրումների առումով ամենահագեցածը: Թ. Շահվերդյանը ներկայացնում է ոճական կրկնության բազմաթիվ տեսակները, որոնց առանցքում նախադասության անդամներն են, ինչպես նաև լիիրավ անդամ չհանդիսացող լեզվական միավորները (կոչական, եղանակավորող բառեր // վերաբերական(ներ), շաղկապ), ածանցների ու արմատների վրա հիմնված մասնիկները, բաղադրյալ ստորոգյալի հանգույցը, արգելական մասնիկը, միակազմ նախադասությունը, հռետորական հարցական նախադասությունը:

Գրքում վկայված բնագրային բազմաթիվ օրինակները ստույգ են և նպատակային, հաստատում են շարահյուսական ոճական բազմապիսի իմաստներն ու նրբիմաստները, լեզվի արտահայտության և բովանդակության պլանների փոխադարձ կապն ու առանձնահատկությունները, այլ կերպ ասած՝ գիտական արժեք ունեն և ապահովում են ուսումնասիրվող նյութի գիտական կողմն ու նպատակասլացությունը: Քննարկումներ կատարելիս հեղինակը, որպես կանոն, իր մոտեցումներն է դրսևորում և մի քանի հարցերում նոր դիտարկումներ անում: Մեկ օրինակ՝ կրկնության ոճական գործառնությունները բնութագրելիս նկատում է, որ ավելադրությունները, որոնք ոճական արժեք չունեն, չպետք է շփոթել որոշ ոճական արտահայտությունների հետ, և բուհական ձեռնարկներ-

րում բայական (դերբայական, դիմավոր), սեռական հոլովով ավելադրություններ համարված կառույցները ոչ թե ավելադրություններ են, այլ ռճական արտահայտություններ (ճիշտ է ասված, ընդունելի է, և մենք մեր նոր կազմվող գրաբարի դասընթացում շտկում կատարեցինք):

Տասնհինգ էջ ընդգրկող ամփոփումով հեղինակի եզրահանգումներն արժեքավոր են և օգտակար լեզվանյութին առնչվող հետազոտություններ կատարողների համար:

Այսպիսի նորովի և հետաքրքրաշարժ ուսումնասիրության մեջ, բնականաբար, կարող էին սպրդել նաև որոշ թերություններ և սխալներ: Այսպես, վերաիմաստավորման գործառնությունով բովանդակության պլանում դերբայական կառույցները միանշանակորեն վերածվում են դիմավոր կառույցների, մինչդեռ արտահայտության պլանում անորոշ և անցյալ դերբայներով շարահյուսական անդամ կառույցները իրենց կիրառությամբ, արժեքով և իմաստային հարաբերություններով տարատեսակ են, որոնք տարբերակված ձևով չեն ներկայացված:

Լրաբեր 1-17

Հստակեցված չեն դերբայական նախադասությունների բուն և կողմնակի ենթակաները. անդամ կառույցների ենթակաները կողմնակի են համարված, որը ճիշտ չէ: Օրինակ՝ «Ասե՛ մարգարէն զգայլս և զգառինս արօտակիցս միմեանց լինել» (Ոսկ. Ես.): Այս շարահյուսական կառույցի մեջ «զգայլս» և «զգառինս» հայցականով կողմնակի ենթականեր են «լինել» ստորոգյալի համար՝ «Ասե՛ մարգարէն զի գայլս և գառինս արօտակից միմեանց լինէն» (էջ 49): Այստեղ՝ 1) «հայցականն անորոշի հետ»՝ *“accusativus cum infinitive”* անկախ կառույցի ենթակա- ները կողմնակի չեն, 2) բովանդակության պլանում ենթակաները պետք է լինեն ուղղական հոլովով՝ գայլք և գառինք, 3) կան վրիպումներ՝ լինէն (փխկ.՝ լինին) և չընդգծված ենթակա (գառինս): Տե՛ս նաև էջ 47, 48:

Կան քերականական բնույթի սխալներ, որոնք, մեր կարծիքով, անուշադրության արդյունք են: Օրինակ՝ 131-155 էջերում հարակրկնության ռճական գործառնությամբ հանդես եկող նախադասության անդամների շարքում նշվում են նաև բաղադրյալ ստորոգյալի հանգույցը, հրամայական ստորոգյալի արգելական մասնիկը, միակազմ նախադասությունը և հոետորական հարցական նախադասությունը: Էջ 191-ում նշվում է, որ *որպէս* նախադրությունը ստանում է հայցականով խնդիր՝ նրա հետ դառնալով նախադասության մեկ անդամ, բայց վկայված նախադասություններից երեքում սխալներ կան. մեկում նախադրու- թյուն չէ (որպէս ընկերքն մեր արարին), երկուսում խնդիրները հայցականով չեն (ոչ որպէս մարդոյ է Աստուած սպառնալիք և ոչ որպէս որդւոյ մարդոյ զի տանջէ. ոչ որպէս ամաչեցեալք ամաչեցին):

Թերություններ կան ընդգծումների և էջանշումների, որոշ բառագործածումների (համադաս // համադասական, ստորադաս // ստորադասական, օգտագործել // գործածել), վկայված օրինակների և այլ հարցերում, քիչ չեն վրիպումները:

Այսուամենայնիվ, Թերեզա Շահվերդյանի «Դասական գրաբարի շարահյուսական ռճաբանություն» գիրքը գիտական կուռ, թարմ ու նորովի խոսք է ժամանակակից հայ լեզվաբանության և քերականագիտության մեջ, օգտակար է հայոց լեզվի պատմություն և ռճագիտություն ուսումնասիրողների համար:

ՄԿՐՏՁԱՆ Է. Ս.

Բանասիրական գիտությունների դոկտոր